ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

11 հուլիսի 2021թ. **N 186-Ա**
ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ՀԱՅԱՍՏԱՆ ԴԱՇԻՆՔԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ Ա. Օսեյանի կողմից 08.07.2021թ. N 36-181-21 գրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվել է միջնորդություն՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրություններին մասնակցած Հայաստան դաշինքի ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածու Մխիթար Զաքարյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2021 թվականի մայիսի 31-ին կայացրել է «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրություններին մասնակցելու համար Հայաստան դաշինքի ընտրական ցուցակը գրանցելու մասին» թիվ 57-Ա որոշումը, որով գրանցել է Հայաստան դաշինքի ընտրական ցուցակը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրություններին մասնակցելու համար:

Հայաստան դաշինքի ընտրական ցուցակի 17-րդ հերթական համարի պատգամավորի թեկնածու է գրանցվել Մխիթար Սեյրանի Զաքարյանը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2021 թվականի հուլիսի 10-ին, ժամը 20:00-ին հրավիրված արտահերթ նիստում ստացվել էր պատգամավորի թեկնածու Մխիթար Սեյրանի Զաքարյանի դիմումը, որում նշվում է. «Խնդրում եմ, Իմ նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և ազատությունից զրկելու հարցում համաձայնություն ստանալու միջնորդության քննության համար այսօր ժամը 20:00-ին նշանակած նիստը հետաձգել ողջամիտ ժամկետով՝ հնարավորություն ընձեռելով, որ կարողանամ ներկա գտնվել դրան և իրացնել իմ իրավունքները:»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը բավարարելով պատգամավորի թեկնածու Մխիթար Սեյրանի Զաքարյանի դիմումը՝ 2021թ. հուլիսի 10-ի, ժամը 20:00-ին նշանակած նիստը հետաձգեց և նշանակեց 2021թ. հուլիսի 11-ին: Նիստի օրվա և ժամի մասին Մխիթար Սեյրանի Զաքարյանին ծանուցելով՝ հեռախոսահամարին հաղորդագրություն ուղարկելու միջոցով:

Պատգամավորի թեկնածու Մխիթար Սեյրանի Զաքարյանը չնայած ծանուցվել էր քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին միջնորդության քննարկման օրվա և ժամի մասին, սակայն նիստին չներկայացավ:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ նաև Ընտրական օրենսգիրք) 90-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն.

«Պատգամավորի թեկնածուի՝ մինչև պատգամավորի լիազորություններն ստանձնելն ընտրված պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությամբ: Առանց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնության՝ նա չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ, երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նշված հարցի վերաբերյալ որոշում ընդունում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով: Սույն մասով սահմանված դրույթը չի տարածվում մինչև թեկնածու գրանցվելը ձերբակալված կամ կալանավորված քաղաքացիների, ինչպես նաև ձերբակալված անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և նշված անձանց կալանքի ժամկետը երկարաձգելու դեպքերի վրա»:

Քննարկելով ներկայացված միջնորդությունը և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Միջնորդությունը բավարարել՝ տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրություններին մասնակցած Հայաստան դաշինքի ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածու Մխիթար Զաքարյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. Մ Ո Ւ Կ Ո Ւ Զ Յ Ա Ն**